

# Փ Ո Ւ Ն Ք

## ԱՉԳԱՅԻՆ

Ուրիշ տարիներ այս ժամանակներս մայրաքաղաքիս շատ վարժարանաց մէջ քննութեան ու պարգևարաշխութեան հանդէսներ կկատարուէին: Բայց այս տարի գրեթէ բնաւ չլուրջ: Արդեօք այս տարի վարժարան չկայ Պօլսոյ մէջ:

Շատ մեծ պիտի ըլլար՝ այս մասին մեր զգացած տրտմութիւնը, եթէ Արմաշի վանուց գիշերօթիկ վարժարանին հարցաքննութեան ու պարգևարաշխութեան հանդիսին կատարուած ըլլալը չլսէինք, խառնաձիւղի Շահնազար-Նուպար վարժարանի դրանց բոլորովին գոյուած ըլլալու գուժին վրայ: Արմաշէն մեզ հաղորդուած տեղեկութիւնք գոհունակութիւն կյայտենն տեղւոյն վարժարանին վրայ, և յոյս կուտան մեզ թէ անխափան պիտի շարունակէ ի շնորհս անդու և անվհատ շանից սրբազան վանահօրն և պատուարժան Ուխտին:

Մեք այդ Հաստատութեան արդիւնաւոր վիճակն ու ընթացքը ի բազմաց հետէ դիտած և հռչակած եմք. մեք միշտ հրաւեր կարգացած եմք ուսումնասէր ազգայնոց, որ օգնեն այդ Հաստատութեան, որովհետև օգնութեան կարօտ և արժան է: Ունի վանքը պարտուց ծանր բեռ մը. եթէ թօթափէ այդ բեռն իւր վրայէն՝ առաւել ևս կոդեւորի, և իւր աշխատութիւններն առաւել եւս կարգիւնաւորին:

Ռուբինեան գիշերօթիկ վարժարանի տարեկան հարցաքննութիւնք պիտի կատարուին յուլիս 17էն սկսեալ հետեւեալ օրերուն մէջ:

Յուլիս 17 շաբաթ. Հայերէն, գաղղիարէն, տաճկերէն:

Յուլիս 20 երեքշաբ. թուաբանութիւն, աշխարհագրութիւն քաղաքական՝ բնական և ուսումնական, տոմարակալութիւն և դրահաշիւ:

Յուլիս 22 հինգշաբ. կրօնագիտութիւն, սրբազան, ազգային և ընդհանուր ազգաց պատմութիւնք, գեղագրութիւն, գծագրութիւն և դաշնակ:

Յուլիս 23 ուրբաթ. ընթերցանութիւն, ուղղագրութիւն հայերէն, քրիստոնէական վարդապետութիւն և չորս դործողութիւնք թուաբանութեան, նախակրթարանի կարգաց:

Յառաջիկայ կիրակի՝ յուլիս 18, գիւղիս Ս. Սանդուխտ եկեղեցւոյ տօնն ըլլալով հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի, ուր գեր. Տ. Խորէն Սրբազան Արքեպիսկոպոս քարոզութեամբ բանին Աստուծոյ հոգևորապէս պիտի մխիթարէ ներկայ ժողովուրդը. ուստի ի գի-

տութիւն բարեգալտ ժողովրդեան սոյնն հրատարակելիք կինդրուի:

1876 յուլ. 13 Մնամք յարգանքը Բուսնէի-Հիւ. Ի դիմաց թաղ. խորհրդ. Ատենադպիր Ատենապետ

Մերեւել Ղարաբաղ Սիմօ Յովհաննէսեան

Աղթամարայ Ամենապատիւ կաթողիկոս խաչատուր սրբազանը յառաջիկայ կիւրակէ առաւօտ Յուլիս 18ին Ս. Պատարագ պիտի մատուցանէ իւսկիւտարի Ս. կարապետ եկեղեցւոյ մէջ, որոյ համար կը խնդրեմք որ, հաճիք ներկայս հրատարակել Ձեր պատուական լրագրի միջոցաւ ի դիտութիւն եկեղեցասէր Ազգայնոց:

Յուլիս 13 1886

Խորհ. Ս. կրպ. եկեղեցւոյ

Իւսկ. Եհնի-Մահալէ Թաղ. խորհրդոյ

Ատենադպիր Բ. Ատենապետ

Յ. Փափազեան կարդեալ Յ. Չրոնեան

## Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Այսօր ալ չեմք կրնար՝ բացորոշ ծանօթութիւն մը տալ պատերազմական անցից և քաղաքականութեան ներկայ դարձուածոց վրայ:

Պատերազմը կշարունակէ: Սերվիոյ տղայ Միլանն ու Գարատաղի լերան աղքատիկն Նիքոլա՝ ինչպէս կանուանեն ումանք, այս ամիս մ'է որ յայտնապէս ի պատերազմ ելած են ընդդէմ օսմանեան կայսրութեան. այս ամիս մ'է, որ հարուած ի վերայ հարուածոց կընդունին օսմանեան բանակներէն, և բազմաթիւ հրացան, թնդանօթ, ռազմամթերք, ձիան ամեն պատերազմին մէջ կթողուն օսմանցւոց ձեռքը, և բիւրաւոր մարդիկ սերվաց ու գարատաղցւոց կողմանէ հըրացանի ու թնդանօթի ճարակ կերթան, բայց դարձեալ կտոկան, դարձեալ ըստ պաշտօնական հեռագրութեանց՝ 10, 20 կամ 30 հազարներով դէմ կելնեն, և 4, 6 ու 10 և աւելի ժամերով կպատերազմին: Սերվիոյ Տղայն, իրաւ է որ իւր երկրին մէջ կգտնուի, սակայն զանի յուսալիք ու նիւնն վիճակի մէջ ցցունող տեղեկութեանց հակառակ՝ իւր քովը դացողներուն հետ անվհատ կխօսի, վերջապէս Սերվիոյ յաղթութեան վրայ յոյս կյայանէ, և անվհեր կհռչակէ թէ Սերվիա մինչև վերջին շունչը պիտի նահատակի իւր նպատակին ժամանելու համար:

Միլան՝ թէև հարուածեալ սակայն կը համարձակի կյուսայ, որովհետև ամեն օր, շատ կողմերէ դրամ ու մարդ կթափին, ամեն օր եղած կորուստներուն տեղը կցուի, Միլան կյուսայ և չվհատիր, որովհետև վստահեցուցած են զինքը թէ Սերվիա պիտի մնայ նոյն՝ ինչ

որ էր պատերազմէն յառաջ, եթէ երբէք իւր բաժինը պարտութիւն ալ ըլլայ: Սերվիոյ զօրաց գլուխը կանցնին ոչ միայն ռուս այլև բրուսիացի փորձ ու կերթ զինուորականք: Իսկ Գարատաղի Աղքատիկն առաւել ևս համարձակ և յուսալից կերի. պատերազմին հրատարակութեան մինչև այսօր երկրէն ելած է, և իւր մարդոց գլուխը կգտնուի Օսմանեան սահմանին վրայ, կռնակը ոչ միայն արտաքուստ եկած զօրութեանց այլև դժուարահպելի ապառաժներու ու առապարներու տուած:

Բայց թէ պիտի յաջողին վերջապէս չեմք կարծեր, որովհետև յայտնի կտեսնուի որ դոքա ինչպէս որ սկսան, նոյնը չեն այժմ. յարձակմամբ սկսան, և այժմ ինքզինքնին պաշտպանել հարկադրեալ են. Սերվիոյ ամենէն ստուար բանակին գլուխն անցած ամենէն յանդուգն ու քաջասիրտ Չերնայեֆն իսկ որ մինչև Պօլսոյ դարձ առաջադրութիւն ունէր քաջուած է այժմ Սերվիա, և պաշտպանողական դիրքի մէջ կգտնուի. իրաւ տակաւին օսմանեան սահմանին վրայ պատերազմներ կըլլան, բայց կհաւաստեն, թէ օսմանեան զօրաբաժինք գրեթէ ամենքն ալ ընդհանուր և լիազօր կերպիւղէպի երկրին խորերն արշաւելու համար նախնական պատրաստութիւններ կտեսնեն, և ծանր լուրեր, առնելու ժամանակը մերձ է: Մեք ականատես եմք. Տաճկաստան չքնանար այժմ՝ ոմանց կարծածիս պէս դրամ և մարդ կառավարութեան օգնութեան կհասնին, նուիրական անուններով գրգռու ու յորդոր կըտրուի ժողովրդեան, և կրօնի և հայրենեաց պաշտպանութեան ազդու դասեր կաւանդուին:

Մեք մտադիր էինք, այս տողերէն յետոյ սակաւ մ'ալ քաղաքական նոր դարձուածոց վրայ որոճալ, բայց հարկադրեցանք զանց առնել. որովհետև երէկ երեկոյեան դէմ և այս առաւօտ մեր ազգային լրագիրներէն՝ Մեծմուսայի Հավատիս և Նորազիր անուն թերթերու մէկ մէկ յաւելուածն տեսանք, որոց պարունակութիւնը խիստ հետաքրքրական է ընդհանրապէս ամեն հայու համար: Աստանօր կնշանակեմք առաջնայն ամբողջ թարգմանութիւնը, և երկրորդին բովանդակութիւնը: Մակայն մեք չեմք կրնար ըսել թէ ստոյգ են այս հրատարակութիւնները, և հարկ կհամարեմք մեր ընթերցողները հրաւիրել որ մեզի հետ սպասեն ստոյգ տեղեկութեանց, որ անշուշտ ընդ փոյթ կհասնին, վասն զի չէ կարելի որ այսպիսի ծանր անցքեր օրերով ի ծածուկ մնան, և ճամբորդներէ միայն լուրին:



Կովկասեան դաւառին մէջ եթէ մեր ոգեհատոր ազգայինք արդարեւ նուիրական նպատակաւ մը ի զէն շարժած են, մեք շատ պարտաւորութիւններ ունինք, մեք օգնելու եմք Տաճկաստանէն, մեք ալ ոգևորելու եմք: Բայց սպասենք, ստուգենք, մի՛ գուցէ փողոցի ստայօդ և անյարիր լուրեր եղած ըլլան:

Ահաւաստիկ Մէճմուայի յաւելուածին թարգմանութիւնը:

« Այսօր (յուլիս 16) մայրաքաղաքս եկած լուրերուն նայելով, Ռուսիոյ կովկասեան դաւառին մէջ բնակեալ բոլոր հայերն՝ վրաց և չէրքէսաց հետ՝ 80 հազարէն աւելի, սպառազիններ, և իրենց վրայ յարձակող 40 հազարէ ուսու բանակը ցիր ու ցան ըրեր, բոլոր բանակն խանգարեր, և շատերը սպաններ են:

« Կովկասեան դաւառին զօրաց դուրսը անցեր է Միքայէլ դուքսը, և դարձեալ երկու հայ հրամանատարաց տրամադրութեան ներքեւ 13 ական հազար զօրք՝ երեք թիւի բաժնուեր են. իւրաքանչիւր զօրաբաժին 6 ական թընդանօթ ունի, և Միքայէլ դուքսին հրամանին ներքեւ գտնուող բանակը 50000 հոգիէ կը բաղկանայ ելեր, հանդերձ 8 թնդանօթով:

« Այս տեղեկութիւնը Օտէսայի ճանապարհաւ եկած է: Ռուսիոյ մէջ այս պատճառաւ մեծ տագնապ տիրեր է, և միանգամայն երկիւղ կայ եղեր, թէ մի՛ գուցէ Ռուսիոյ սահմանին մօտ եղող հայերն ալ սահմանն անցնելով Միքայէլ դուքսին բանակին հետ միանան, որովհետեւ ամեն ոք մեծապէս զայրացած է՝ Վեհ. կաթողիկոսին խնդրոյն պատճառաւ:

« Եկած տեղեկութիւններէն մէկն ալ որով կիմացուի թէ Հայոց վրայ զրկուած 4000 ուսու զօրքն ալ դուքսին կողմէն անցեր են, Ռուսիոյ մեծ իրարանցում կ'պատճառէ:

« Այժմ, Ռուսիոյ կառավարութիւնը իրար անցած, և նոյն կողմը դարձեալ զօրութիւն զրկելու վրայ է:

« Չեմք գիտեր, թէ Սերվիոյ ու Գաբատաղի օգնութեան համար զրկուած ուսու հրամանատարները շտապով ետ կ'անչել, և կովկասեան դաւառը զրկելու պիտի հարկադրի Ռուսիա:

Իսկ Նորագրի յաւելուածին բովանդակութիւնն է:

« Երէկ երբ մեր գրասեղանը նստած ուրիշ նիւթի վրայ կը գրէինք՝ երիտասարդ Ռուսաստանցի մը՝ արժանահաւատ անձ մը ըլլալը երաշխաւորելով՝ պատմեց թէ ինքը 13 օրէ ի վեր Գաբատաղէն եկած է Բօթիի ճամբով, թէ կովկասեան դաւառն պաշարման վիճակի մէջ է, թէ այդ դաւառին եկեղեցեաց մէջ Ռուսիոյ դերդաստանին անուան յիշատակութիւնը դադարած է, թէ ստուգելու Միքայէլ Մեծ Դուքսը՝ որ Ռուսիոյ կայսեր եղբայրն է՝ Հայոց գլուխն անցած է, թէ նամակագրութիւն արգելուած է, թէ Վեհ. կաթողիկոսը էջմիածնայ մէջ շրջապատեալ է, վերջապէս ինչ որ անհաւանական կը կարծուէր՝ կենդանի բարբառով հաւատացուցին մեզ:

« Սկսուած պատերազմին մանրամասնութիւնն է:

« Չորս զօրապետ կայ չորս բանակի գլուխը:

- 1. Յովհաննէս զօրապետ
- 2. Քրիմ Մէլիք »
- 3. Պասքօ Իւվանովիչ »
- 4. Շիանօֆ »

« Հայոց հետ միացած են Բաց գլուխ ըսուած դասը, իբր 50,000:

« Վրացիներն ու Չէրքէսներն իբր 40,000:

« Քարապաղի Հայ քաջ հասարակութեան թիւը անձանօթ է:

« Կովկասեան դաւառին բոլոր Ռուսներն փախած են:

« Կառավարութիւնը բոլոր դաւառները դրեթէ հաղորդակցութեան դադարեցուցած է, հեռագրական թիւերն խզուած են:

« Բոլոր զինուորաց ձեռքի զէնքն է Ռուսական զէնքեր:

« Միքայէլ Մեծ դուքսին և Ռուսիոյ կայսեր կարծեաց տարբերութիւնն է, Մեծն Ներսէս կաթողիկոսի խոստացեալ կտակն հիմայ թէ Արևելեան պատերազմէն ետքը գործադրել Միքայէլ դուքսը հիմայ ժամանակն է կըսէ, Ռուսիոյ կայսրը Արևելեան խնդրոյն լուծուելէն ետքը:

« Հիմակու հիմայ Հայերն 18 թնդանօթ ունին և պահպանողական դիրքի մէջ են. Ռուսական բանակ մը կեցեր կը հսկէ յարձակելու համար, սակայն Միքայէլ մեծ դուքսին ներկայութիւնը Ռուս զօրաց խստութիւնը մեղմացուցած է, որովհետեւ նա ալ կայսերական դերդաստանէն և կայսեր եղբայրն է:

« Երէկ իրիկուն իմացանք որ Վեհ. կաթողիկոսին անձնական նամակները բացուելէն ետքը բօթային կը տրուին:

« Խոստութիւնն այն աստիճան է եղեր՝ որ Պոլսեցի Տ. Գ. անուն մէկը երբ իր եղբօրը նամակ գրելով իմանալ ուզեր է այս դէպքերուն ճշգրտութիւնը, առանց այդ նամակին պատասխանն առնելու, անցեալ օր Հրէայ մը կ'դանէ այդ Տ. Գ. անուն անձը, դու կըսէ եղբայր ունիս ի Ռուսաստան, այո՛ կըսէ, ըստ եղբայրդ իմ ընկերոջս հոն ըսեր է որ քու գրած նամակիդ պատասխանը չպիտի կրնայ տալ:

« Ահա այս աստիճան խստութեան մէջ է եղեր հաղորդակցութիւնը »:

### ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստափառ Սուլթանը երէկ ձիով աղօթելու գնաց Տօլմա-պաղչէի մրցկիթը:

— Նախարարը երէկ նիստ ըրին թօփահանէ. և այն պահուն մեծ Եպարքոսը հեռագրով բանակեցեալ Պոսնայի հրամանատար Տէրվիչ փաշայի հետ:

— Թունուղի ժողովրդէն 3000 հոգի կամաւոր գրուելով՝ անգղիական շոգեհաւով մը մայրաքաղաքս գալու համար ճամբայ ելեր են, կըսէ Պասիթէթ:

— Լուր կայ, թէ Յունաստանի գլուխուր նախարարն հեռագրով խնդրեր է Գեորգ թագաւորէն, որ շուտով գառնայ, որպէս զի խորհրդարանը բացուի և արտօնութիւն առնուի՝ 40 հազար զօրք սպառազինելու համար: Եթէ ստոյգ է՝ Յունաստանի կողմանէ ստէպ լուած չե-

զօքութեան յայտարարութեանց վրայ եղած կատկածները կարգարանն:

— Մայրաքաղաքի անգղիական դեսպանը՝ որ Պէշիքա դացած էր, երէկ առաւօտ դարձաւ՝ բայց դաղիական թըլթատար շոգեհաւով. որովհետեւ իրեն յատուկ շոգեհաւն կէլիպօլի կողմերը ցամաքը խրեր է, և ազատելու համար շոգեհաւ մը զրկուած է մայրաքաղաքէս:

— Այլեայլ աստիճանէ 560 պատուանշան՝ զինուորական գործոց պաշտօնատան յանձնուեր է, պատերազմաց մէջ երևելի հանդիսացող զօրականաց բաշխելու համար:

— Մեծ կղզին, լրագրական վերատեսուչ Պլաք պէյի տիկնոջ նախագահութեամբ, տիկնայց մասնաժողով մը կաշխատի նուէր հաւաքել կայսերական վերաւոր զօրաց համար:

— Չինուորական վարժարանաց վերատեսուչ Սիւլէյման փաշայի, տնօրէն իլդէթ պէյի, և Մուլթար Էֆէնտիի ու Լէֆթէր պէյի՝ չորսորդ աստիճանի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ:

Բժշկական վարժարանի դասախօսներէն ոմանց ալ պատուանշան տրուեցաւ, յորս են մեր ազգայիններէն Խանտանեան Յակոբ և Կրճիկեան Անդրանիկ պէյերը, որոնք արդէն ունէին պատուանշան, բայց այս անգամ փոխուեցաւ և աւելի բարձր աստիճանէն տրուեցաւ:

— Բ. Դրնէն յուլիս 13 թուով հետեւեալ հրամանագիրը զրկուեցաւ էտիրնէի, Դանուբի, Պոսնայի ու Մանասթըրի կուսակալութեանց և զինուորական գործոց նախարարին:

« Լսուեցաւ, որ Վիտինի կողմէն Սերվիա անցուղարձ ընող կամաւորներէն ոմանք իրենց հանդիպած մանչ ու աղջիկ փոքրիկ աղայքն իբրև գերի ու աղախին կիլճառեն, մինչդեռ այս տեսակ առուտուրն կառավարութեան կողմանէ խրտախաւ արգիլեալ է, և չհնազանդողք՝ միշտ կ'պատժուին: Ռուսի անմիջապէս փոյթ տարէք՝ տպագրեալ յայտարարութիւններով ծանուցանել թէ այս օրէն յետոյ որոնք որ Սերվիայէն և շրջակայ վայրերէն այնպիսի աղայք առնեն ու տան, իսկոյն մահուամբ պիտի պատժուին: Միանգամայն ժամանակ մը որոշել՝ այնպիսի աղայք քովերինն ունեցողներուն համար, որ բերեն և կառավարութեան յանձնեն. իսկ եթէ որոշեալ ժամանակին մէջ դարձեալ չ'յանձնողներ գտնուին, նոյնպէս մահուան պատժով պատժուին: Նաև պէտք է իրենց տեղերը դարձունել այն անձինքն, որ այսպիսի չարք գործելու նպատակաւ պատերազմական վայրերը ելած են »:

— Պոսնայի դաւառական լրագրին գրածին նայելով, Սերվիայէն բաղձաթիւ ընտանիք Աւստրիա կիտախին, սաստիկ ահուգողի մէջ ըլլալով թէ տաճիկ զօրքն ու տաճիկները իրենց ետեւէն ինկած են: Դարձեալ յիշեալ լրագրը կ'ծանուցանէ, թէ թերթը մամուլը դրուած ժամանակը իմացեր է որ Սերվիոյ իշխանուհին հեռագրով ծանուցեր է Բ. Դրան, թէ Պոսնայի քրիստոնէից որ և է խընդրոյն չպիտի միջամտէ Սերվիա, եթէ պատերազմէն յառաջ ունեցած վիճակին մէջ անփոփոխ պահուի:



— Արտաքին գործոց թղթակցութեան գիւղանիւն տնօրէն կարգեցաւ Պօլսոյ քաղաքապետութեան նախորդ Մէքսթուպի Մէհմէտ Ալի պէյ :

— Պօլսոյ քաղաքապետ Գատրի պէյ հինգշաբթի կրետէ ուղևորեցաւ, տեղւոյն ժողովրդեան ինչ ինչ խնդրոց կարգադրութեան համար :

— Մոսկուայի համալսարանին ուսուցիչներէն Մուլլոֆ անուն մէկն, քանի մը բժիշկ, դեղ ու գործիք պատրաստած ու Պէլլրատ երթալ որոշած, բայց ճանապարհի ծախուց համար բաւական դրամ չունենալն հրատարակած ըլլալով, շատ կողմերէ մեծ մեծ գումարներ թափիլ սկսեց են : Նախ վաճառական մը 2000 գարպոն զրկեց է յիշեալ ուսուցչին՝ յատուկ նամակաւ մը : Յետոյ վրատիմիր գիւղաքաղաքի քաղաքապետութեան նախագահն ալ պահարանի մը մէջ 1500 գարպոն զրկեց է : Բեդրսպուրկէն ալ պէտք եղած գումարին ճամբայ հանուած ըլլալը ծանուցանող երկու հեռագրեր քաշուեց են :

— Գաղղիական, գերմանական ու անգղիական բազմաթիւ լրագրաց թղթակիցներ կգտնուին պատերազմին տեղերը :

— Կիպրոս արտորեալ Ալթունի Գօսթաքի պէյ անուն մէկն այս օրերս արձակուեց է : Վագրթ կըսէ, թէ սա 2 1/2 տարիէ ի վեր արտորեալ էր. անկէջ յառաջ ալ վեր տարի բանտարկեալ, և երկու տարին դժնդակ բանտի մէջ մնացած է, որոյ պատճառը երբէք յայտնի չէ : Յիշեալ լրագիրը կյաւելու նաև, թէ Գօսթաքի պէյ նախորդ վարչութեան օրով ամենազրկեալ անձանց մէկն է :

— Հանրածանօթ կարիպալտի քաջալերութեան գիր գրեց է առ սերվիացիս :

Գանի մը սերվիացիք կարիպալտի գացեր աղաչեց են, որ իրենց օգնէ. բայց նա անձնական տկարութիւն պատճառելով հրաժարեց, և ըսեց է թէ իւր մարդոցմէն կորկէ յօգնութիւն :

— Սերվիոյ իշխանութիւնը իմանալով որ իշխանութեան հետամուտ Գարաեօրկօվիչ օսմանեան ծպտեալ պաշտօնատարաց ոմանց հետ գաղտնի բանակցութիւն մ'ըրած է, ուզեց է ձերբակալել, բայց փախեց է. հետևաբար ի բացակայութեան նորին որոշուեց է մահուամբ պատժել զնա :

— Մայրաքաղաքիս մէջ հրատարակուող Տէն անուն պուլար լրագիրն բոլորովին խափանեցաւ, օսմանեան քաղաքական ու զինուորական պաշտօնատարաց դէմ գրած, և Պուլարիոյ համար զրուցուած խժժութեանց վերաբերեալ նամակներ հրատարակած ըլլալուն համար :

— Ենիպազարի զօրաբաժնին ընդհանուր հրամանատար Մէհմէտ Ալի փաշայի՝ վէճիրութեան, և նոյն բաժնին մէջ գտնուող Պուստ փաշայի՝ Պէրիգութեան աստիճան տրուեց է :

— Ֆաթմա Սուլթան 1000 լիրա նուերեր է ի նպաստ զինուորական արտաքոյ կարգի ծախուց :

— Ղալաթիոյ և Պէյօղլուի հրէայ տիկնայք ալ սկսեց են կայսերական զօրաց վիրաւորելոց գարմանին համար պէտք եղած պիտոյքն մատակարարել :

— Անցեալ շաբթու Պալատ Սինակոկային մէջ, ի ներկայութեան խախամագլխոյն բարեմաղթութիւններ եղեր են վասն յաջողութեան օսմանեան կառավարութեան, և հանգանակութեան յորդորուեր է ժողովուրդը :

— Կայսերական կառավարութիւնը վերջապէս որոշեց 3 միլիոն լիրայի թղթութեամբ շրջաբերութեան հանել, ներկայ արտաքոյ կարգի ծախքերէն ստիպեալ, և միանգամայն չուղելով ծանր տուկոսիւք նորանոր փոխառութիւններ ընել :

Այս թղթագրամը՝ 100, 50, 20, 10 և 5 նոց պիտի ըլլայ, Պէլլիքի արժէքով, և հին թղթագրամին ձևով. բայց հին թուղթան նորի վերածել, և 5 նոցի համար նոր կաղապար ձուլել և ինչ ինչ յաւելուածներ ընել հարկ ըլլալով՝ 2-3 շաբթ ետքը երևան պիտի ելնէ : Թըուանչան պիտի ունենայ, և տեսակ մը դիմացկուն թուղթի վրայ պիտի տպուի : Ապահովութեան համար յատկացեալ են՝ օգոստաիաու Սուլթանին կողմանէ կայսերական գանձուն թողուած կալուածոց ու էրէյլիի ածխահանքին հասոյթները, զոր օսմանեան պանքան պիտի առնու ամեն տարի, և նովալ այնչափ թղթագրամ շրջաբերութեան պիտի ջընջէ : Բուսումնաթէն զատ, կառավարութեան բոլոր պաշտօնատուներ պիտի ընդունին եղեր :

Սիրիոյ նախորդ կուսակալ Համիտ փաշայի նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուեց է թղթագրամին շրջաբերութեան և այլ գործողութեանց միջոցներն սահմանելու պաշտօնով :

— Պասիքթի մէջ հրատարակեալ նամակէ մը կըսուեց հետևեալ տողերը :

Չորեքշաբթի օրը ժամը կին ատենները, Ենի գիւղ յանկարծ մեծ իրարանցում մ'եղեր է, եկեղեցւոյն զանգալն ալ սկսեց է հնչել, և ամեն մարդ կրակ կայ ըսելով՝ սկսեց են գեղին մէկ կողմը վազել, և ջրհանները վերցուեր տարուեր են : Բայց շատ չէ քշեր, վաղդիներն սկսեց են ետ ետ դալ, ինչպէս նաև մանր տղայք և կանայք, բարձրագոյ աղաղակներով և ամենքն ալ լեղապատառ եղած : Կպօսան եղեր, թէ Սօֆթաները գիւղին յոյն գպրոցը կոխեց են, և տըղայքը սրէ կանցունեն : Եւ ահա քիչ մը ետքը կանայ փաթթօցուեր և կունակը ներկարարի շապիկ մը հագած ծեր մարդ մը տեսնուեցաւ, որ ուտիկանաց հետ կուգար : Այս մարդը ներկարար ըլլալով գիւղին մէջ շինութեան մը աշխատած ատենը, ճարտարապետը դպրոցը զրկեց է զինքը՝ բուերու (պատանա) համար. մարդը աշխատելու ելած ժամանակ մէկը աղաղակ բարձր է թէ Սօֆթաները կոխեցին գպրոցը և տղայքը սրէ կանցունեն. ասոր վրայ տղայք սարսափելով փախչիլ սկսեց, և տուներէն տեսնող կանայք դուրս թափեց են ի պահպանութիւն որդւոց. վերջապէս զարհուրելի տեսարան մը բացուեց, և տղայք ու ծնողաց ոմանք վախերնուն մարեր ինկեր են : Բայց վերջապէս իմացուելով բանին էութիւնը, ամեն մարդ հանդարտեց է :

Պասիքթ այս դէպքը հրատարակելէն

յետոյ, առաջարկած է ձերբակալել հասարակաց յուղման պատճառ եղող անձն ու շարաշար պատժել :

— Կէլիպօլի առջևները օսմանեան գրօշակով վաճառական նաւ մը կրակ առեր և ամբողջ այրեց է, բայց նաւաստիքն ազատեց են՝ այն միջոցին անտի անցնող հօլանտական նաւու մը շնորհիւ :

Ներկայ տարւոյս սկիզբը, Ռուսիոյ զինուորական վարժարանաց մէջ 9125 ուսանողաց գտնուիլը կծանուցուի այս օրերս :

— Հաշիւ եղած է, թէ Լոնտոնի մէջ 10096 տիկնայք գրական գործերով զբաղեալ են. 1077 դրամվաճառ, 7357 կազմարար, 741 տոլագրիչ, 741 լրագրավաճառ կամ ցրուիչ, 135 թանգարանապետ, և 255 խմբագիր :

— Յունաստանի թագաւորն ու թագուհին՝ որ Տանիմարքա գացած էին, Տանիմարգայի թագաւորին ու թագուհւոյն հետ Բեդրսպուրկ ուղևորեց են :

— Թայդան եզանց մէջ տեսակ մը հիւանդութիւն երևան ելեր է, և քօլերայի հարուածներ ալ կատանուին եղեր :

— Դաղմատիոյ և Հէրսէքի սահմանը գումարեալ աւստրիական զօրաց թիւն՝ 70 հազար է եղեր :

Սամսունէն՝ յուլիս 3 թուով նամակ մը հետևեալ տեղեկութիւնները կուտայ :

« Արեւ շատ տեղերու նման հոս ալ զօրածո ղով կըլլայ. Սամսուն իր շրջակայներով, հիմա 800 նոր զօրքեր ունի, թէ՛ բեռք և թէ՛ կամաւոր, որոց մէկ մասն քանի մ'օր յառաջ ճամբայ ելան, մնացեալք ալ պիտի զրկուին քիչ օրէն : Չորս օր յառաջ հրապարակաւ մուսնեթիկն յայտարարեց, թէ ամեն ազգէ անձինք, եթէ ուզեն, կրնան կամաւոր զօրք գրուիլ. ասոր վրայ մի քանի հայեր՝ դատաստանէ և պարտքէ խոյս տալու մտքով զինուորագրիլ ուզեցին, բայց նպատակին երբ հասկցուեցաւ մերժուեցան : Բանտարկեալ ոճրագործք ալ միահամուռ առաջարկած են տեղական կառավարութեան, թէ զօրագրուիլ կուզեն, բայց պատասխան տրուած է, թէ՛ « օրէնք չեն ներեր ամաստանելոյ մի, մանաւանդ ոճրագործի մի, զօրք գրուիլ » :

« Կըլսեմք, թէ Ամասիոյ կողմերէն 7000ի շափ զօրք՝ այսր գալու համար ճամբու դրուած են :

Այս տեղի կամաւոր զօրաց թիւն առ այժմ 30-35ի կը հասնի :

« Միախոտի բերքն, այս տարի, միօրինակութիւն չունի : Քաղաքէս մինչև 3 ժամու շափ հեռու տեղերն անձրևէ կարօտ մնալով սպարդիւն մնացին. իսկ անկէջ անդին գետնուածներն, բաւականին շափ անձրև վայելելով խիստ առատ և բեղմնաւոր ու ընտիր են : Արմտեաց գալով, թէև բարձր են հասակաւ, բայց ընդհանրապէս ոսին են : Սակայն, ընդհակառակն Ամասիոյ, Եւզոկիոյ, Սերաստիոյ և այլոց շրջակայք, հաւաստի տեղեկութեանց նայելով, արմտեաց բերքերու կողմանէ շատ բարեբաղդ եղած են » :

ԿՈՏԱՆԳԻՆՊՈԼԻՍ	
Յուլիս 16	
Քօնսօլտէ	12-6
Սօսիէթէ Ժէնէրալի բաժինք Անդ. լիր.	1-52
Քրէտի » » Օսմ. »	2-12
Երկաթուղեաց » » Քր.	56,
Թրամուէյ Օսմ. լիր.	1-
1865ի փոխառութիւն	Քր. 65
1865ի » » »	64
1869ի » » »	57
1872ի » » »	20-



ՆՈՐ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՈՅՐ

ԱՌՈՒՄՆ ՆԻՆՈՒԷԻ

Գրեաց ծերանին Գաբրիել Պատրիստեան Տղայրոսեան Տեղեկան Չփանին

Հուշակաւոր հեղինակին բանաստեղծութեանց մէկ մասն է, իբրև շարունակութիւն ԱՆՈՒՇԱՒԱՆԱՅ և ՊԱՐԻՏԻ Գրաբառ և ընտիր ոճով գրեցազնեղութիւն մի է, զոր կ'ուզերձէ վեհափառ Գեորգ Գ. Կաթողիկոսի անուան: 72 երեսէ կը բաղկանայ ՊԱՐՈՅՐՆ, մաքուր տպագրութեամբ, յորում յառաջաբանութիւն մը և հեղինակին երկու նամակները կան ի ցնծութիւն վերադարձի Ապտուլլահեան Մեծ եղբարց գրուած և նոցունց մէկ նամակ առ Հ. Պատրիստեան:

Կը ծախուի Եհնի-Ճամի փողոց Չիլինկիրէր ճատատէսի, թիւ 8 Մ. Ղ. և Եազմաճեան գրատունը. գին 1 ֆրանք:

ՄԱՍՆԱԻՐ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՅՂԻ ԿՆՈՂ

ՆՈՐԱՅԻՆ ՄԱՆԿԱՆ

Գործ: Ա. Տեղե Գաղղեայի արտադրանքի Երկրորդ տպագրութիւն

Կը գտնուի ամեն Հայ գրավաճառացքով, և Պահճէ գաբու սուճի Պողոս աղայի խանութը, Չուխաճի խանի ներքեւը թիւ 12 սահաթճի Նիքոթ աղային խանութը, Օրթագիւղ նաւամատոյցին գլուխը թիւթիւնճի Մարտիրոս աղայի խանութը, և Պահճէ գաբու Խսատ Եֆէնտի խան թիւ 13 Ե. Մ. Տնտեսան տպարանը: Գին մէկ արծաթ մէճիտ:

ՊԱՊԸ ՍԵՐԱՍՔԷՐԻ

Ասաքիւրի շահանէ երգաք անպարը իշուն անպարտա մահֆուղ նիւմուսեփինէ միւթապըք օլմադ վէ պէշ պին գըյէսի հէման վէ գուսուրը օթուղ պիր կիւնէ գատար թէսլիմ գըլընմագ վէ պէհասը մագպուղ սէնէտի վիրուտիւտէ պէր վէճհը փէշին սիմ մէճիտիյէ իկիրմիպիր պուշուգ զրուշա օլարագ նիղամիյէ խազինէսինտէն վիրիւմէք շուրութը ինէ լուղումի օլան օն պէշ պին գըյէ Հանեա սապօնընըն պէհէր գըյէսի տէօրթ զուրուշա թալիպի հօհտէսինտէ օլուպ թէմուղը ընմիւնին օն տօգուղունճը փաղար իրթէսի կիւնի գարարը գաթիսի վիրիւմէճէկիւնտէն իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մէգըլուրտէ Տարը շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի:

1876 թէմուղ 15

Պապը Սէրասքէրի

Վէլի Էֆէնտի սահիլինտէ քեային պէղ ֆապրիգայի հիւմայուն տէրունիւտէ վադը պաղճէ Էնվայի մէյլէ վէ սէպղէ վէ սայրէ ինէ իշպու սօքսան իքի սէնէսի շէհըր թէմուղընըն իկիրմիւնճի կիւնիւտէն ըուղը քասըմա գատար վէ պուստան սօնրա սէնէլիկի քիրայա վիրիւմէճէկի վէ շէհըր մէգըլուրին օն եէտինճի ճիւմա իրթէսի կիւնի միւղայիտէսի իճրա օլունա-

ճաղը ճիհէթլէ օլ վէճհլէ իճարէ թալիպ օլանլարըն Տարը Շուրայի ասիլէրի լէվազիմ տայիրէսինէ միւրաճաթ իյլմէլէրի իլան օլունուր:

13 թէմուղ 1876

Պապը Սէրասքէրի

Ասաքիւրի շահանէ իշուն Էսմանը սիմ մէճիտիյէ իկիրմի պիր պուշուգ զրուշհէսապը ինէ Էտիրնէ Էմվայինտէն փէշինէն հէվալթէն վիրիւմէք իւղրէ Տարը Շուրատա մահֆուղ նիւմուսեփինէ թատալիգան միւղայեա օլունաճագ օլան օն պին գանթար պէքսիմէթին պէհէր գանթարը իւղ իկիրմի իւղ զրուշ օլարագ թալիպի հօհտէսինտէ օլուպ թէմուղը ընմիւնին օն տօգուղունճը փաղար իրթէսի կիւնի գարարը գաթիսի վէրիւմէճէկիւնտէն իթա իթմէկէ թալիպ օլանլարըն եէվմը մէգըլուրտէ Տարը Շուրայի ասքէրիյէ կէլմէլէրի:

1876 թէմուղ 13

Պապը Սէրասքէրի

ՊՈԼԻՍ ՅԻՆՃԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ

ԱՄԵՐԻԿԱՆ ԻՍՆ ԹԻՒ 27  
Ընտանեկան ամեն տեսակ կարերու, թէ՛ ոտքով և թէ՛ ձեռքով դիւրաւ գործածելի մեքենաներուն զանազան տեսակները, աժան գընով կը ծախուի և ծախու առնողներուն ձրի դաս կը տրուի. նաև մինչև վեց ամիս՝ քանի անգամ որ աւուրի՝ ձրի կշտուի: Կարի մեքենայի վերաբերեալ ասեղ, դերձան, և ուրիշ զանազան գործիքներ կ'առնուին, ինչպէս նաև չորապ, ֆանէլա, շալ, ուսկուֆա, թէնոց ևլն. գործող մեքենաներ: Աւրուած մեքենաներ կը շտուգուին և մեքենայով կարել սորվիլ ուղղունըն ալ դաս կը տրուի:

ԱՌՍԱՐԵԳԱԿՆ



ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԵՂՈՐԷԻՑ Վ. ԾԱՆՆԻ

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իւր գեղորէից ընտրութեամբ և գնոց չափաւորութեամբ հրուշակուած: Միակ մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիալէտին շինած Ցալին լակտին, որ փոքրիկ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութեան ապաքինելոց միակ անդաբար ուտելիքն է

համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գըլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած:

Հոն կը գտնուի նաև. Գաթիս (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի:

Սիւլֆաթի քը Բիլին, զուտ և մաքուր, Բէլթի, Տիւպօք, Ժօպսթ և Էվանա Լէղէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած:

Չիան Էոլ, զուտ, Գրիսթիանայի Բէթէր Մէլլէրի գործարանէն ելած:

Ելէրթէ (հինտիպա) Խահուէ, Լուսովիկապուրկի Հ. Յրանք գործարանէն ելած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող, որ հասարակ խահուէի հետ խառնելով դիւր մեծապէս կ'իջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու:

Արաւստիկան սառոյց ամեն ժամու մէջ: Տէմէնի Չար, մաղերու անվրայելի ներկ:

PILULE HOLLOWAY

ԴԵՂԱՆՆԱՅԻ ՀՈՒՆՈՒԷԻ  
Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է այն դեղահատը, նաև իջային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը: Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ: Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կուճուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, զլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտոգորութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական դիրքը կ'զգենու:

ONGUENT HOLLOWAY

ՄՊԵՂԱՆԻ ՀՈՒՆՈՒԷԻ  
Մորթային հիւանդութիւնը և վէրք բուժելու մասին ունեցած պայսամական յատկութեանցը չհաւասարի բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնէ), սրունից և ասեանց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կ'աւանան. օգտակար է նաև հարրուխի, հազի, սրտի բարակաման, մանաւանդ օղացաւ (եէլ) ըստած հիւանդութեան: Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբ խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ գորութիւնը ինչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրուէ: Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահճէ-գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7 կը ծախուի: Աւելի աննիւ ուղղող կը հրաւիրուի առ հեղինակն տղթոր Հոլլուէ Ի Լոնտոն Օքըսֆորտ փողոց թիւ 535:

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՁԻ

- 1.—Փունջը ՉՈՐԵՄԵՆԱԹԻ և ՇԱՐԱԹ օրերը կը հրատարակուի:
- 2.—Տարեկան բաժանորդագրին է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ՛ գաւառաց համար:
- 3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի:
- 4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ:
- 5.—Հատը 40 փարպէ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով:
- 6.—Մանուցման տողը 3 զրուշ է մէկ անգամի համար: Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար:
- 7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Արաճաճեան, Կ. Պոլիս Արաճա-Համամ Խալի խան միջին յարկ թիւ 19:

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ Հ. Ս. ԱՆՆԱՃԱՃԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻՋՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ Բիգա փաշա խան քիւ 3